

2015. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԻՆ

Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրության առումով 2015 թ. չափազանց տպավորիչ և կարևոր տարի էր: Թեման նորից վերադարձավ հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, հետազոտական մի քանի նոր ուղղություններ ի հայտ եկան, գիտական նոր նյութ դրվեց շրջանառության մեջ: Դժվար է հիշել մի տարի, որն այսքան առատ լիներ թեմայի վերաբերյալ գիտաժողովներով և գիտական հրատարակություններով:

Գիտաժողովներ

Միջազգային գիտաժողովների թիվը տարեվերջին մոտեցավ 60-ի: Տպավորիչ էր աշխարհագրությունը՝ բոլոր մայրցամաքները, նաև այն հաստատությունները, որոնք հյուրընկալել են գիտաժողովները: Դրանք աշխարհի լավագույն համալսարաններն են, ամենահեղինակավոր գիտական կենտրոնները: Մասնակցություն բերեցին ինչպես հայ, այնպես էլ օտարերկրացի հայտնի գիտնականներ, ցեղասպանագիտության առաջին մեծության հեղինակություններ: Սա թեման դուրս բերեց միայն ներհայկական դաշտից: Գիտաժողովներից շատերն այնքան նշանավոր էին, որ արժանի են առանձին անդրադարձի, սակայն փորձենք թվարկել ամենանշանավորները և կենտրոնանալ ամենակարևոր միջոցառման վրա:

Տարին սկսվեց հունվարի 31-ից փետրվարի 1-ը Բեյրութի Հայկազյան համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովով: Նրան հետևեցին գիտաժողովներ տարբեր քաղաքներում՝ Օսլո, Հոլոքոստի և կրոնական փոքրամասնությունների ուսումնասիրությունների նորվեգական կենտրոն (փետրվարի 5), Չիկագո, Իլինոյսի Հոլոքոստի թանգարան (փետրվարի 8), Հոում, Ջոն Քերոտի անվան ամերիկյան համալսարան (փետրվարի 19), Հաագա, Գոլբալ արդարադատության ինստիտուտ (մարտի 6-7), Պադովայի համալսարան (մարտի 11-12), Ներրասկայի-Լինքոլն համալսարան (մարտի 19-20), Արիզոնայի համալսարան (մարտի 21-22), Փարիզ, Սորբոնի համալսարան, Հոլոքոստի հուշահամալիր, Հասարակագիտության բարձրագույն դպրոց, Ֆրանսիայի ազգային գրադարան (մարտի 25-28), Նյու Յորք, Կոլումբիայի համալսարան (մարտի 27), Էջմիածին, Գևորգյան ճեմարան (ապրիլի 6), Կահիրե, «Այն Շամս» համալսարան (ապրիլի 10), Լոս Անջելես, Կալիֆոռնիայի համալսարան (ապրիլի 10-11), Ժնևի համալսարան (ապրիլի 15), Բերքլիի համալսարան (ապրիլի 18), Ստամբուլ, Բողազիչի համալսարան (ապրիլի 26), Լոնդոն, Միդլսեքսի համալսարան (մայիսի 15), Բարսելոնա, Կատալոնիայի համալսարան (մայիսի 18), Մոնթեվիդեո, Հանրապետության համալսարան (մայիսի 21), Բադրադ (մայիսի 23), Բուենոս Այրես (հուլիսի 2), Բեռլին, Հայնրիխ

Բյուլ հիմնադրամ (սեպտեմբերի 5), Մոնկոնո, Կանադա (հոկտեմբերի 2), Երևան, ԳԱԱ (հոկտեմբերի 15-16), Մոսկվա (հոկտեմբերի 23-24), Թեյ Ավիլ, Իսրայելի Բաց համալսարան (նոյեմբերի 2-4): Սա միայն ամենաներկայացուցչական գիտաժողովների ցանկն է:

Իհարկե, գազաթնակետը հուլիսի 8-12 –ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից Երևանում հյուրընկալված Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության (ՑՄԸ) 12-րդ գիտաժողովը դարձավ: «20-րդ դարի ցեղասպանությունների համեմատական վերլուծություն» խորագիրը կրող գիտաժողովն ունեցավ 180 մասնակից, 40 նիստերի ընթացքում լավեցին զեկուցումներ ցեղասպանագիտության ամենատարբեր ոլորտներից, ընթացան գիտական աշխույժ քննարկումներ ու զեկուցումներ: Գիտաժողովի անցկացումը Երևանում ինքնին վկայում է, որ Հայաստանը դառնում է ցեղասպանագիտական ուսումնասիրությունների կենտրոն, ինչն ապացուցում են գոնե ՀՅԺԻ գրադարանում և գիտական ֆոնդերում աշխատող օտարերկրյա գիտնականների մեծ թիվը, ինչպես նաև հայաստանցի մասնագետների ակտիվ մասնակցությունը միջազգային նախագծերին և գիտաժողովներին:

Գրահրատարակչություն

Տարին աչքի ընկավ նաև գիտական, ակադեմիական հրատարակչություններով: Դրանք մենագրություններ էին, որոնք հետազոտում և լուսաբանում էին հայերի կյանքը Օսմանյան կայսրությունում, ցեղասպանության պատճառները, որոշումների կայացման և իրականացման մեխանիզմները, զանգվածային ոչնչացման ընթացքը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության հետևանքները ու հետևանքների վերացման ուղիները: Դրանք հուշագրություններ էին, թարգմանություններ, կատալոգներ և պլոմներ, որոնք թույլ էին տալիս ավելի լավ հասկանալ կատարվածի ամբողջ բովանդակությունը և էությունը:

Շատ կարևոր է, որ աշխարհի գրեթե բոլոր առաջատար հրատարակչությունները 2015-ին Հայոց ցեղասպանության թեմայով հրատարակումներ են ունեցել՝ գրքեր, ժողովածուներ և այլն: Այսպես, Princeton University Press-ը հրատարակեց Ronald Grigor Suny-ի “They Can Live in the Desert but Nowhere Else:” A History of the Armenian Genocide – գիրքը, իսկ Oxford University Press-ը Fatma Muge Gocek-ի Denial of Violence, Ottoman Past, Turkish Present, and Collective Violence against the Armenians, 1789-2009, Stanford University Press-ը Lerna Ekmecioglu-ի “Recovering Armenia, The Limits of Belonging in Post-Genocide Turkey” և Bedross Der Matossian-ի Shattered Dreams of Revolution: From Liberty to Violence in the Late Ottoman Empire և այլն:

Նոր հետազոտական ուղղություններ

2015-ին ընդառաջ մեծ աշխատանք տարվեց նաև մինչև այժմ նվազ ուսումնասիրված հետազոտական ուղղություններով:

Ամենակարևորներից է Հայոց ցեղասպանության պատկերագրության ուսումնասիրությունը: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն այդ բացը որոշ չափով լրացրեց՝ հրատարակելով Հայկ Դեմոյանի «Հայոց ցեղասպանության լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին» գիրքը: Այն, ինչպես նաև «100 լուսանկարչական պատմություններ» ժողովածուն ներկայացնում են Հայոց ցեղասպանությանն առնչվող վիզուալ նյութը:

Կարևոր ուղղություն է նաև Հայոց ցեղասպանության միկրոպատմագիտությունը: Այս առումով հատկանշական էր ֆրանսահայ պատմաբան Ռայմոն Գևորգյանի «Հայոց ցեղասպանություն. Ամբողջական պատմություն» գիրքը, որի ռուսերեն հրատարակությունը լույս տեսավ 2015 թ.: Այն Հայոց ցեղասպանության հիմնախնդիրն ուսումնասիրում է միկրո՝ տեղային մակարդակում՝ ըստ առանձին բնակավայրերի՝ ընդգրկելով որոշակի մարդկային պատմություններ:

Կարևոր ուղղություններից են նաև Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հիմնահարցին ավելի լուրջ անդրադարձները: Այս առումով նշանակալի է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի նախաձեռնությամբ դեռ 2012թ. գիտաժողովի անցկացումն ու դրա նյութերի տպագրումը International Criminal Law Review միջազգային հեղինակավոր ամսագրում:

Հատուկ Հայոց ցեղասպանությանը նվիրված համար հրատարակեց նաև ոլորտում ամենահեղինակավորներից մեկը համարվող Journal of Genocide Research ամսագիրը: Նմանօրինակ՝ միջազգային հեղինակավոր խմբագրակազմով և գրախոսող գիտական ամսագիր սկսեց առաջին անգամ հրատարակվել նաև Հայաստանում՝ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում՝ International Journal of Armenian Genocide Studies: 2016 թվականից այն հայտնվելու է աշխարհի առաջատար գիտական EBSCO շտեմարանում:

Հետևություններ

Եթե փորձեն ամփոփել, ապա կարելի է եզրակացնել, որ 2015 թ. տեղի ունեցած իրադարձություններն ու կատարված աշխատանքները վկայում են՝

- ա. հաջողվել է համախմբել համաափյուռ հայության գիտական ներուժը: Տարին ցույց տվեց, որ այն հսկայական է, գիտական աշխարհում ազդեցիկ և ցանկության դեպքում կարող է դերակատարում ունենալ:
- բ. Հայոց ցեղասպանության հարցում միջազգային գիտական հանրույթը կոնսենսուսի է եկել, և ոչ ոք այլևս չի քննարկում Ցեղասպանության եղելության հարցը, իսկ ժխտողական աշխատությունները որևէ տեղ չունեն լուրջ ակադեմիական գիտության մեջ: Եթե նախկինում պարբերաբար այս թեմայի շուրջ գիտական կամ ավելի ճիշտ կեղծ-գիտական բանավեճեր էին հրահրվում, այսօր Հայոց ցեղասպանության ժխտողականությունը գիտական առումով բացարձակ մարգինալ հոսանք է:
- գ. Ավելացել է գիտական հետաքրքրությունը հիմնախնդրի վերաբերյալ, բազմաթիվ ցեղասպանագետներ ու պատմաբաններ սկսել են ուսումնասիրել նաև Հայոց ցեղասպանությունը: Մրանից բխում է հաջորդ դրական արդյունքը. լուծ-

վել է նաև ոլորտի մասնագետների սերնդավիճակի և հարցը հատկապես Հայաստանում: Հայաստանն աստիճանաբար դառնում է համաշխարհային ցեղասպանագիտական կենտրոններից մեկը:

դ. Կա նաև մտավիճակ, որ 2015 թ. նման աշխատանքը, ակտիվությունը և ձեռքբերումները կարող են շարունակական չլինել: Չէ՞ որ ոչ վաղ անցյալում տարիներ շարունակ Հայաստանից դուրս գիտաժողովների, ինչպես նաև այս թեմայով տպագրվող գրքերի թիվը 1-2-ից չի անցել: Մեր կարևորագույն խնդիրներից է փորձել գոնե կիսով չափ պահպանել այս տեմպը և մեր աշխատանքները չկապել միայն տարելիցների հետ: Իհարկե, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը շարունակելու է ակտիվ աշխատանքը, ինչպես դա շարունակական անում է, սակայն այնպես չստացվի, որ այն մնա միակ հաստատությունը, որ թեմայով զբաղվում է մշտապես և ոչ թե կլոր տարելիցների առիթներով:

Ի գործ:

Սուրեն Մանուկյան, պ.գ.թ.

«Ցեղասպանագիտական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ